# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

24 ՀՈՒՆԻՍԻ 2021 թ.

№ 8 (1072)

*Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին*
*Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի*

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ՀԱՅԱՑՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Մանկավարժական համալսարանում հունիսի 4-ին տեղի ունեցավ «Հայաստանը 1945-1965 թթ.» խորագրով հանրապետական գիտաժողով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և թեմայի ընտրության շուրջ իր նկատառումներն արտահայտեց ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

Ներկայացնելով Հայաստանում մշակութային կյանքի զարգացման միտումները 1950-ական թվականների երկրորդ կեսին՝ ռեկտորը հանգամանորեն անդրադարձավ մի շարք կարևոր երևույթների՝ խորհրդային մշակույթի զարգացման ընթացքին՝ խորհրդային կյանքի ու սոցիալիստական շինարարության դրվատման միտումներով, Հայաստանի մշակութային գերատեսչությունների ղեկավարների դիրքորոշումներին՝ խորհրդային կյանքը գովերգելու նույն սխեմայով, միաժամանակ ազգային ակունքներից չհեռանալու գաղափարի արծարծումներով, Խրուշչովյան «դեմոկրատիայի» պատրանքով ոգեշնչված մշակույթի ոլորտի ներկայացուցիչներին, որոնք փորձում էին ազատ մտածողությունը դուրս բերել գաղափարական կաղապարներից, ինչպես նաև Խրուշչովի կողմից ստալինյան գործելակերպի քննադատության հետևանքով մշակույթի ոլորտի զարգացման համար ինչ-որ չափով նախադրյալների ստեղծմանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանը:

Բանախոսը կարևորեց միջգիտակարգային հանդիպումները և նման քննարկումների պարբերականությունը:

Ա. Մելքոնյանի կարծիքով՝ Խորհրդային Հայաստանի շատ խնդիրներ դեռևս լուսաբանված չեն: Անդրադառնալով խորհրդային շրջանում Հայաստանի ներքին ու արտաքին խնդիրներին՝ նա փաստեց. «Պետականության առումով մենք պարտավոր ենք լավ ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի պատմությունը»:

Աշոտ Մելքոնյանը նաև ցավով նկատեց, որ խորհրդային տարիներին սոցիալիստական Հայաստանում ունեինք դասական գրողներ, իսկ Հայաստանի անկախության շրջանում չունենք այդպիսիք: Պետք է խորապես ուսումնասիրվի խորհրդային շրջանը, որովհետև շատ խութեր կանե:

Պլենար նիստում ներկաները լսեցին Ամատունի Վիրաբյանին, Դավիթ Մուրադյանին, Սուրեն Դանիելյանին:

ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանի զեկուցումը վերաբերում էր 1948-1953 թվականներին Հայաստանից ադրբեջանցիների վերաբնակեցմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, աշխարհասփյուռ հայերին իրենց հայրենիքում համախմբելու նպատակով, Սփյուռքի և Հայաստանի մտավորականների շրջանում օրախնդիր դարձավ Կարսի մարզը և Արևմտյան Հայաստանը (Թուրքահայաստանը) Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջը:

«Թուրքիային բռնակցված հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու հարցը չէր լուծվում: Շուտով սկսվելու էր ներգաղթը, հայրենադարձներին պետք էր տեղավորել, իսկ Խորհրդային Հայաստանի հնարավորությունները սուղ էին»,-ասաց Ա. Վիրաբյանը: Զեկուցողն անդրադարձավ 1945 թվականի նոյեմբերին Մոսկվայում ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի՝ Ստալինին ուղղված նամակին, որով հայտնում էին՝ «Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի երկրամասերը Հայաստանին վերամիավորելու դեպքում կարող էին հայրենադարձների բնակեցման խնդիրը լուծել»: Սակայն Ադրբեջանի կենտկոմի քարտուղար Բաղիրովի «թեթև ձեռքով» առաջ քաշվեց Հայաստանում բնակվող ադրբեջանցիներին Ադրբեջանի վերոհիշյալ տարածքներ վերաբնակեցնելու և հայրենադարձ հայերին այդ տարածքներում բնակեցնելու հարցը, ու խնդիրն այդ կերպ լուծվեց:

1939 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում բնակվում էր 131 հազար ադրբեջանցի, պատերազմի հետևանքով 1948 թ. այդ թիվը դարձել էր 110-115 հազար, որոնցից 6 հազարը քաղաքաբնակ էին. ապրում էին Երևանում և Լենինականում: 1948 թվականին միութենական կառավարությունը նոր որոշում կայացրեց՝ Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր ադրբեջանցիների վերաբնակեցման և նրանց ունեցվածքային իրավունքների ապահովման մասին: Ու թեև վերաբնակեցումը խիստ կամավոր էր, շատ ադրբեջանցիներ վերադառնում էին Հայաստան՝ առանց իրենց ունեցվածքի: Բանախոսը ներկայացրեց, թե ինչպես 1950-ականների սկզբներին Ադրբեջանի իշխանությունները ակտիվորեն օժանդակում էին ադրբեջանցիների հետդարձին Հայաստան:

Ցավոք, երբ «1954 թվականին Հայաստանի կոմկուսի կենտկոմը և նախարարների խորհուրդը դիմում են ԽՄԿԿ կենտկոմին՝ զանգվածային վերադարձողների հարցը կանխելու համար, պարզ դարձավ, որ 1954 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանում բնակվում էր 107,8 հազար ադրբեջանցի, այսինքն վերաբնակեցումը բնակչության քանակի վրա չէր ազդել և պահպանվել էր 1948 թ. մակարդակը»:

Հայկական ազգային կինոակադեմիայի նախագահ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր Դավիթ Մուրադյանը հանդես եկավ «Կինոն և նոր ինքնության գիտակցությունը 20-րդ դարի 60-ականներին» զեկուցումով:

Զեկուցողն իր խոսքը սկսեց նախորդ դարի 60-ականների ամենաբնորոշ կինոստեղծագործություններից մեկի՝ Ֆրունզե Դովլաթյանի «Բարև, ես

➤2

## ԲԱՐԻ՞ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՛ ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

Հունիսի 4-ին համալսարանական բակը մի անսովոր աշխույժով էր լցվել. դեպի կյանքի մի նոր փուլ էին ճանապարհվում ՀՊՄՀ հենակետային վարժարանի 5 ենթահոսքերի 125 շրջանավարտներ: Օդը լցվել էր հուզմունքից թրթռացող հրաժեշտի խոսքերով, թեև այս տարի չկար նախորդ տարիների տոնական տրամադրությունը... Հետպատերազմյան անորոշ ու անբացատրելի զգացողությունները դեռ առկախված են բոլորի սրտերում ու թույլ տվեցին «Վերջին զանգը» ներկայացնել մի փոքրիկ ֆլեշ-մոբով: Պարային հոսքի շրջանավարտների ազգային ռիթմերը և մյուսների՝ խաղաղության մասին երգի կատարումը ազդարարեցին 2021 թվականի շրջանավարտների կյանքի առաջին փուլի ավարտը....

«Սիրելի՛ շրջանավարտներ, ընդունե՛ք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները՝ դպրոցում ուսումնառության ավարտի և «Վերջին դասի» կապակցությամբ: Այս տարիների ընթացքում դուք շրջապատված եք եղել մանկավարժների ջերմությամբ, ընկերական մաքուր և անաղարտ հարաբերություններով: Ձեզ սովորեցրել ենք լինել ազնիվ, բանիմաց՝ երկրին ու հայրենիքին նվիրված քաղաքացիներ: Եվ այսօր՝ կյանք ենք ճանապարհում շատ հասուն և կազմակերպված մի նոր՝ հզոր

➤3

*Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:*

Գարեգին ՆԺԴԵՀ

# ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Հունիսի 11-ին ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ընդունեց Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Գագիկ Արտաշեսի Կարապետյանին, շնորհավորեց նրան 70-ամյա հոբելյանի առթիվ և համալսարանի գիտական խորհրդի անունից հանձնեց «Մանկավարժական համալսարան» մեդալ:

«Դուք հայ պարարվեստի ասպարեզի մեծագույն պարուսույցներից եք և անվանի մանկավարժ: Հանրության համար շատ կարևոր է բալետմայստերի աշխատանքը, նրա բեմադրած պարը, սակայն ես ավելի շատ կարևորում եմ ձեր մանկավարժական գործունեությունը, հիմնարար մանկավարժությունը»,-ասաց ռեկտորը:

Նա ընդգծեց այն փաստը, որ Գագիկ Կարապետյանը երկար տարիներ աշխատել է Կարեն Գևորգյանի ղեկավարած ամբիոնում և, իր հմտություններն ու կարողություններն է փոխանցել ուսանողներին, որոնք էլ սերնդեսերունդ կփոխանցեն իրար ստացած գիտելիքները: «Միշտ ազգի հետ, միշտ սերնդի հետ, մանավանդ, որ այդ արվեստը ազգային է»:

Ռեկտորը համալսարանի գիտական խորհրդի անունից «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրեց Ալեք Մանուկյան փողոցի համալսարանական մասնաշենքերի առջև տեղադրված հուշակոթողի ճարտարապետ Սեմյոն Իվանի Բարսեղյանին՝ եզակի խաչքար-հուշակոթողին ճարտարապետական հետաքրքիր ոճ ու լուծում տալու համար:

«Հուշակոթողողը ուղղակիորեն առնչվում է մեր ազգի վերջին պատերազմի ողբերգությանը և այն հավերժացնում է մեր երիտասարդ տղաների հիշատակը: Շատերն ընդունվեցին համալսարան ու չհասցրին անգամ սովորել, մեկնեցին հայոց բանակ: Եվ այս խաչքար-հուշակոթողն իր բովանդակային իմաստով բացառիկ է, ձեր շնորհիվ մենք քաղաքում ունեցանք նահատակների անունները սրբացնող ու հավերժացնող հուշակոթող: Տարիների հետ շատ բան մոռացվում է, բայց այս հուշակոթողը բոլորի հիշողությունն արթուն կպահի նաև տարիներ հետո: Շնորհակալություն ձեր աշխատանքի ու ստեղծագործ նվիրումի համար: Մեր բոլորի պարտքն է հիշել նրանց, որոնք իրենց երիտասարդ կյանքը զոհեցին հայրենիքի սահմանները պաշտպանելու համար»,-ասաց ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

# ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ




Լույս է տեսել «Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940 թթ.) Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան» գիրքը:

ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի հեղինակած աշխատությունը նվիրված է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Կիպրոսի թեմի վերակազմության գործընթացին: Գրքում առանձին անդրադարձ է կատարվում Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի գործունեությանը՝ որպես Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդ և կաթողիկոս, ինչպես նաև 1920-30-ականներին Կիպրոսում կիպրահայերի հաստատմանն ու թեմի վերակազմավորմանը, Կիպրոսի թեմի ջանքերին՝ հայապահպանության և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, եկեղեցու և սփյուռքի պատմության հարցերով հետաքրքրվողների համար:

# ՀԱՅԱՑՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

➢1 եմ»-ի վավերագրական կադրերի ներկայացմամբ՝ բարձրաձայն խորհելով. «Ի՞նչ է սա: «Փոքր ածու» լինելու բարդույթը թոթափելու պոռթկում: Դարի հարվածներից կծկված ժողովուրդը՝ ցեղասպանություն, առաջին հանրապետության կորուստ, 37 թվականի մի նոր յաթաղան, երկրորդ համաշխարհայինի ծանր վերքեր,-ապրում է մեծ աշխարհի հետ հավասարի պես շփվելու, մարտահրավեր նետելու և փառավորապես ինքնահաստատվելու հոգեզգացողություն: Սա 60-ականների հենց շեմն է: Այո, նա հիմա կարող է լիաձայն ասել,- «Բարև, ես եմ»: Եվս մի երկու տարի անց,- «Մենք ենք, մեր սարերը»: Այսինքն ազգային Ես-ի և ազգային հավաքականության զգացում: Հոգեբանական նախապատրաստություն՝ ապագա անկախ պետության համար»:

Այնուհետև բանախոսը փաստեց, որ դա միայն կինոյով չէր, որ «այդ ինքնագիտակցությունը խմորվում էր նաև գրականության, կերպարվեստի, երաժշտության մեջ, որովհետև կամաց-կամաց վերադառնում էր «արգելված» հիշողությունը, Հայաստանն ու Սփյուռքը երկխոսում էին իրար հետ»: Իսկ մոնումենտի պատվանդանի արձանից ձերբազատումն ու Մայր Հայաստանի տեղադրումն արդեն իսկ վերադարձ էր ազգային երազանքերին ու արժեհամակարգին:

Դավիթ Մուրադյանն իր խոսքն ամփոփեց՝ Դովլաթյան, Մալյան, Փարաջանով, Փելեշյան անունների կողքին դնելով նրանց խաղարկային ու վավերագրական ֆիլմերը՝ իբրև փոփոխվող ժամանակներում հայկական ինքնագիտակցության համաքայլ վերադարձ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանը խոսեց ազգային կեցության գրամշակութային կերպերի շուրջ՝ Հայրենիքի և Սփյուռքի համատեքստում:

Պրոֆեսորն անդրադարձավ պատմության մեջ հայ ժողովրդի հավաքական կյանքի «փոթորկոտ ու անհանգիստ շրջաններին», հարաբերական անդորրին և «ուժերի նոր կուտակումով վաղվա գոյաբանական մարտնչումներին նետվելուն պատրաստվելուն», որը «հատկանշվել է նաև ռոմանտիկ սպասումներով»:

Զեկուցողը հանգամանորեն խոսեց խնդիրների մասին, որ ծառացել էին հայության երկու հատվածների միջև, ստեղծելով անջրպետ, որ «Սփյուռքը կանգնած էր հայեցի գոյության երկընտրանքների առաջ», որ «համայնատիրությունը օտար էր իբրև գաղափար և հեռու ազգայինի ողնաշարից»:

Անդրադարձ Շահնուրի պատմվածքին, ուր նկատելի է բաժանարար գիծը արևմտահայ-արևելահայ հարաբերության խնդրին, անդրադարձ Պ. Սևակին, ով նկատեց, որ «արևմտահայ գրականության մեջ ավելի ցցուն, քան արևելահայ հատվածում, երևան էին գալիս նեղազգային հատկանիշները», անդրադարձ Ա. Ծառուկյանի «Թուղթ առ Երևան» պոեմին, անդրադարձ բեյրութահայ բանաստեղծ Մ. Իշխանի բանաստեղծական ուղերձներին …

Պրոֆեսորը խոսեց «պատերազմի հաղթական ավարտին հաջորդած գրամշակութային դաշտի վրա խորհրդային կարծրատիպի և Սփյուռքի ազգային մտահոգությունների հայտնի բանավեճի մասին, որն անակնկալ էր ներգաղթի համընդհանուր ոգևորության խորքի վրա…» և ամփոփեց. «Պիտի նորովի շարադրել հայ Սփյուռքի ներհակ պատմության փիլիսոփայության էջերը»:

Գիտաժողովը շարունակվեց 2 ուղղություններով, ուր լսվեց 21 զեկուցում:

Առաջին մասնախմբի աշխատանքները նախագահում էր պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը, երկրորդ մասնախմբի աշխատանքները՝ արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը:

# ՌԵԿՏՈՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԻՆ

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հունիսի 16-ին ծննդյան հոբելյանի առթիվ շնորհավորեց համալսարանի աշխատակազմի և միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Արա Երեմյանին, դասախոսներ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սուսաննա Փիլոսյանին, Կարինե Քոչարյանին և ֆիզմաթ գիտությունների թեկնածու Վարազդատ Վարդազարյանին:

Նրանք խոսեցին կրթական համարկարգի մերօրյա հիմնախնդիրների ու մտահոգությունների, մանկավարժական կրթության առցանց ուսուցման, հանրակրթական և համալսարանական կրթության մասին:

Խոսակցություն ծավալվեց Հայաստանում բնագիտական մասնագիտությունների ուղղությամբ դիմորդների սակավության, «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաների գծով դիմորդներ, հետևաբար և շատ դպրոցներում առարկաների ուսուցիչներ չունենալու մասին:

# Համագործակցության լայն հնարավորություն

Հունիսի 18-ին տեղի ունեցավ առցանց հանդիպում Չիկագոյի համալսարանի վարչական և մասնագիտական անձնակազմի հետ: ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի անմիջական նախաձեռնությամբ մեկնարկել է համագործակցային գործընթացը Չիկագոյի մասնագիտական հոգեբանության համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Համագործակցության նպատակը մանկավարժական համալսարանի հոգեբանների և հոգեբանության մասնագիտությունն ընտրած ուսանողների մասնագիտական գիտելիքների վերազինումն է՝ արտակարգ, ետպատերազմյան և ետտրավմատիկ պայմաններում աշխատելու համար:

Հանդիպման ընթացքում համալսարանի միջազգային համագործակցության բաժնի պետ Մարիաննա Հարությունյանը ներկայացրեց համալսարանի տեսլականը՝ կապված ծրագրի հետ, նշելով ուսանողների ներգրավվածության, շարժունության և համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման կարևորությունը և առաջնահերթությունը:

Հանդիպմանը ներկա էր միջազգային հոգեբանության դոցենտ Պատրիցիա Պերեզը, ով մանրամասն ծանոթացավ առկա իրավիճակի և ներկայացվող կարիքների հետ, ապա ծանոթացրեց իր տեսլականին՝ կապված ծրագրի երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների հետ:

Համագործակցության մեկնարկը տրված է, առջևում են նախագծի քննարկումները, հիմնավորումները և համատեղ արդյունավետ աշխատանքը:




# ԲԱՐԻ՞ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՛ ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

➢1 սերունդ, որն իր աշխատանքով ու ներդրումով դառնալու է մեր երկրի հզորացման ու ամրապնդման գործի հուսալի և ակտիվ մասնակիցը: Այս պահից դուք թևակոխում եք կյանքի մի նոր փուլ, որտեղ ձեզանից պահանջվում է լինել առավել զգոն և պատասխանատու, առավել աշխատասեր և նպատակասլաց: Շարունակե՛ք հարստացնել ձեր գիտելիքներն ու իմացությունները… Վստահ եմ, որ դուք դառնալու եք Հայաստանի Հանրապետության իրավատեր քաղաքացիներ…

Սիրելի՜ շրջանավարտներ, թող դպրոցական զանգի ղողանջները դառնան ձեզ համար անհասանելի թվացող բարձունքների նվաճման, նոր և ցանկալի հաջողությունների ձեռքբերման սկիզբն ու ավետաբերը: Վերջին դասի առթիվ շնորհավորում եմ նաև ձեր ծնողներին և ուսուցիչներին, ովքեր ոչինչ չեն խնայել ձեզ համար... Հարգելի՜ ծնողներ, վշտի, անհանգստության այս դժվարին պահին մենք չպետք է մոռանանք մեր երեխաների, մեր սերունդների երջանկության մասին, որովհետև որևէ ուրիշ նպատակ մեզ ապրելու այնքան ուժ չի տալիս, որքան մեր երեխաների երջանկության նպատակը: Սիրելի՜ շրջանավարտներ, այսուհետ արդեն դո՛ւք եք պարտավորվում իրականացնել ձեզ հետ կապված մեր երազանքներն ու հույսերը: Շնորհավորում եմ նաև Հայաստանում, հեռավոր սփյուռքում, Արցախում եւ Ջավախքում ապրող մեր բոլոր շրջանավարտներին, ուսուցիչներին ու ծնողներին՝ մաղթում խաղաղ երկինք, հաջողություններ, նորանոր ձեռքբերումներ և ամենայն բարիք: Խոնարհումս մեր հերոս նահատակների շիրիմներին... Փա՛ռք հայոց բանակին: Փա՛ռք հայ զինվորին: Երախտապարտ ենք...»:

ՀՊՄՀ վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանի բարեմաղթանքները լի էին ոչ միայն վարժարանի նոր սերնդի շրջանավարտներին ուղղված վստահ ու հուսադրող, պատասխանատվության կոչ-հորդորով, այլև իրենց կյանքը հայրենիքի համար զոհաբերած տղաների հիշատակի հանդեպ երախտագիտության անմեկնելի զգացողություններով:

Վարժարանի շրջանավարտները դեպի կապույտ երկինք բաց թողեցին ճերմակ փուչիկներ՝ աղավնիների տեսքով, որոնք բարձրաձայնեցին իրենց խաղաղության ձգտումի ու երազանքների մասին…

Բարի՜ երթ, սիրելի վարժարանականներ, բարի կատարում ձեր բոլոր երազանքներին:

# ՇԱԽՄԱՏԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հունիսի 15-ին Մանկավարժական համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտում մեկնարկեց նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» վերապատրաստումների վեցշաբաթյա դասընթացը (15.6.2021-22.07.2021):

Համալսարանի շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ Սմբատ Լպուտյանը ողջունեց դասընթացի մասնակիցներին՝ ասելով, որ վերջին տարիներին շախմատը մտել է ուսումնական հաստատություններ, մասնավորապես դպրոցներ: Այն դարձել է շատ ցանկալի և կարևոր մի շարք երկրների համար: Շախմատի ակադեմիան հանդես է եկել մի նախաձեռնությամբ, ըստ որի շախմատի գծով վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեն նաև Հայաստանի նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների համար:

«Եթե աշխարհի շուրջ 150 երկրներ հետաքրքրված են շախմատով, ապա ինչու մենք քայլեր չձեռնարկենք,-ասաց Ս. Լպուտյանը՝ փաստելով, որ ՖԻԴԵ-ն ընդառաջեց նախաձեռնությանը և ֆինանսավորեց:

«Ես հավատում եմ, որ այն, ինչ սկսում ենք այսօր, դառնալու է նոր սերնդի կրթության համար անհրաժեշտ ու կարևոր: Այստեղ հավաքվել են մարդիկ, որոնք ուզում են կյանքը փոխել, դարձնել ավելի լավը»:

Ս. Լպուտյանը շնորհակալություն հայտնեց բուհի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի թիմին՝ հոգեբանության դոկտոր Վլադիմիր Կարապետյանի գլխավորությամբ:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակցուհի Մարիաննա Ամիրաղյանը դասընթացի մասնակիցներին ողջունելով, խոսեց արագ փոփոխվող աշխարհի մարտահրավերների մասին՝ ընդգծելով շախմատ առարկայի դերը երեխայի կյանքում ներկա մարտահրավերները հաղթահարելու տեսանկյունից. «Զարգացող աշխարհի մերօրյա մարտահրավերների հաղթահարումը ենթադրում է կրթական համակարգում կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքների վերանայում՝ միտված ինքնուրույն մտածող անձանց ձևավորմանը: Այդ համատեքստում առաջնային նշանակություն է ստանում նախադպրոցական ուսումնական հաստատություններում կազմակերպվող մանկավարժական գործընթացի բովանդակային վերանայումը և նրանում այնպիսի տարրերի ներմուծումը, ինչը կապահովի երեխաների նոր հնարավորությունների բացահայտումը, մտածողության նոր որակի ձեռքբերումը»:

Դասընթացները կկազմակերպեն վերոնշյալ ամբիոնի դասախոսները, որոնք կօգնեն վերապատրաստվողներին՝ ինչպես շախմատը ներմուծել մասնավոր մեթոդիկաների մեջ:

«Մեր նպատակը նա չէ, որ շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններ մտցվի որպես առարկա, այլ դասընթացը միտված է նպաստելու սերնդի ձևավորմանը»,-ասաց նույն ամբիոնի դասախոս Մ. Ամիրաղյանը՝ կարևորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների դերը, որոնց ամրագրած հաջողություններով են պայմանավորված նաև կրթական մյուս օղակների հաջողությունները:

Վերապատրաստված դաստիարակները կկարողանան շախմատ խաղի միջոցով նպաստել երեխաների մտածելու, վերլուծելու, սեփական գործողությունները պլանավորելու և արդյունքները կանխատեսելու ունակություններին:

**Սիլվա ԱՍՐՅԱՆ**

# ՈՒՍՈՒՄՆԱԾԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՕՐԱԳԻՐ

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 1- Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան (10.03.21)

Ուսումնասիրեցինք և ծանոթացանք Հայաստանի տարբեր շրջաններից դիպվածով կամ պարբերաբար իրականացվող պեղումներից հայտնաբերված նախաուրարտական, ուրարտական, աքեմենյան, հելլենիստական և վաղ հայկական ժամանակաշրջաններին վերաբերող հնագիտական առարկաների հետ:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 2- ՀՅԴ պատմության թանգարան (17.03.21) Թանգարանում ծանոթացանք կուսակցության գործունեության վերաբերյալ փաստաթղթերի, յուրօրինակ ազգային ու պատմական արժեքների հետ: Անդրադարձ կատարվեց նաև հայ ականավոր գործիչների՝ Ալեքսանդր Խատիսյանի, Համազասպ Օհանջանյանի, Սիմոն Վրացյանի, Արամ Մանուկյանի,կյանքին և գործունեությանը:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 3- Հայաստանի ազգային արխիվ (03.03.21) Կառույցն իրականացնում է Հայաստանի արխիվային հավաքածուի համալրումը, հաշվառումը, պահպանումն ու օգտագործումը և ծառայություններ է մատուցում արխիվագիտության բնագավառում: Ներկա գտնվեցինք նյութերի վերականգնողական աշխատանքներին, խոսեցինք դրանց կարևորության մասին, ինչպես նաև հնարավորություն ունեցանք տեսնելու ամենահին փաստաթուղթը:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 4- Զորավար Անդրանիկի թանգարան (10.03.21)

Այստեղ պատիվ ունեցանք ծանոթանալու ֆիդայական շարժման նշանավոր գործիչների կյանքին, գործունեությանը, անձնական իրերին՝ Արաբոյից մինչև Արցախյան շարժում: Այցելեցինք նաև Կոմիտասի անվան Պանթեոն :

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 5-Երևանի պատմության թանգարան(17.03.21)

Թանգարանում հնարավորություն ունեցանք տեսնելու հնագիտական, ազգագրական, դրամագիտական, կերպարվեստի, գրավոր աղբյուրների, լուսանկարների և այլ հավաքածուներ, այդ թվում երևանյան քարայրից հայտնաբերված ավելի քան 100 հազար տարվա պատմություն ունեցող ամենատարբեր գործիքներ:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 6- Մայր Հայաստան ռազմարվեստի թանգարան (24.03.21)

44-օրյա պատերազմից հետո ռազմարվեստի թանգարան այցելելը կարևոր և անհրաժեշտ քայլ էր: Ծանոթացանք թանգարանում տեղի գտած՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի, ինչպես նաև Արցախյան ազատագրական պայքարի պատմություններին: Խոսեցինք հայկական 6 դիվիզիաների, պատերազմում խիզախած քաջ մարտիկների կյանքի ու գործունեության մասին:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 7- Շենգավիթ հնավայրը (31.03.21)

Այստեղ տեղեկություններ ստացանք բնակավայրի ստեղծման, ընթացքի և անկման պատճառների մասին: Ծանոթացանք հավաքածուին, որը ներառում է պաշտամունքային իրեր՝ օջախներ, զոհասեղաններ, հեներակներ, ճրագներ, ձկան արձանիկներ, ինչպես նաև կնոջ, տղամարդու, թռչունի, խոյի, ցուլի արձանիկներ, քարե, ոսկրե աշխատանքային գործիքներ, բրոնզե զարդեր՝ օղեր, ապարանջաններ, քորոցներ և այլն:

Ուսումնաճանաչողական Պրակտիկա N 8- Մատենադարան (28.04.21)

Մատենադարանում վերհիշեցինք հայ գրավոր մշակույթի (և ոչ միայն հայ, այլև օտար ազգերի գրավոր մշակույթի) պատմությունը: Այստեղ տեսանք նաև կանանց կողմից օգտագործվող շպարի և այլ տեսակի միջոցներ:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 9- Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան և Մեծամոր պատմահնագիտական (05.05.21)

Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանում ծանոթացանք Հայկական լեռնաշխարհի բնակիչների կենցաղի ու մշակույթի մասին՝ քարի դարից մինչև մեր օրեր Թանգարանն իր մեծությամբ աչքի էր ընկնում և դրա հետ միասին ուներ ահռելի քանակությամբ ցուցանմուշներ Հայաստանի տարբեր ժամանակների վերաբերյալ, որոնց հետ էլ ծանոթացանք:

Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանը ապացույցն է այն բանի, թե որքան հնարամիտ ենք եղել մենք՝ հայերս: Այստեղ հնարավորություն ունեցանք այցելելու նկուղային հարկ, որտեղ նորագույն տեխնոլոգիաներով ներկայացված են Վանի թագավորության շրջանի ոսկե, արծաթե, սաթե, կիսաթանկարժեք քարերից պատրաստված եզակի մշակութային արժեքներ:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 10- ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (12.05.21)

Թանգարանը հնարավորություն տվեց մանրամասն տեղեկություններ ստանալ 20-րդ դարում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի կյանքի, գործունեության, ինչպես նաև հայոց ցեղասպանության վերաբերյալ: Խոսեցինք մշակութային ցեղասպանության, օտարների արձագանքի մասին: Պրակտիկայի վերջում հանդիպում ունեցանք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ներկայիս տնօրեն Հարություն Մարությանի հետ, ով խոսեց ցեղասպանություն դասավանդելու մեթոդների մասին:

Ուսումնաճանաչողական պրակտիկա N 11-Հաղարծին վանական համալիր, Պարզ լիճ (05.06.21)

Ուսումնաճանաչողական պրակտիկայի վերջին կետը Հաղարծինն էր: Այցելեցինք 3 եկեղեցի, սեղանատուն, տեղեկություններ ստացանք կառույցների առանձնահատկությունների, շինարարական աշխատանքների, կառույցների հետ կապված առասպելների և հետաքրքիր փաստերի մասին: Վերջին պրակտիկայի ընթացքում մեզ հետ էր նաև դասախոսական կազմը, որն ավելի անմիջական դարձրեց պրակտիկան:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի բակալավրիատի 2-րդ կուրս

# ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՆՇԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԾԱԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Պետությունների միջև սահմանների սահմանազատման (Border delimitation) և նշագրման (Demarcation) գործընթացը իրավական փաստաթուղթ և գործընթաց է, որի արդյունքը ճշգրիտ տվյալներ են պայմանագրի և տարածքում ինժեներական կառույցների ձևով:

*Սահմանի սահմանազատում* - Border delimitation - legal registration by a line agreement state border between neighboring states, position which is graphically depicted on a topographic map, with the corresponding its description, which can be an integral part of the contract or an appendix to him. *(Делимитация границы).* Հարևան պետությունների միջև պետական սահմանի սահմանագծեր, հաստատված իրավաբանական պայմանագրով, գրաֆիկորեն նշված տեղագրական քարտեզի վրա, համապատասխան տեքստային նկարագրությամբ, որը կազմում է այդ պայմանագրի անբաժանելի մաս կամ հավելված:

*Սահմանի նշագրում* (Demarcation - marking on the ground of the passage of the state borders between neighboring states by border markers with preparation of demarcation documents. Демаркация*).* Հարևան պետությունների միջև տեղանքում սահմանային նշանների տեղակայում, համաձայն սահմանազատման փաստաթղթերի:

*Հերթապահ/կադաստրային քարտեզ* - (Duty / cadastral map - specialized topographic the map on which the government-authorized organization records all

changes in state and administrative boundaries, names cities, settlements and other place names after their respective legal registration. Дежурная/кадастровая карта*) Մասնագիտացված տեղագրական Քարտեզ*, որի վրա կառավարության կողմից լիազորված կազմակերպությունը գրանցում է բոլորը պետական և վարչական սահմանների, քաղաքների, բնակավայրերի անվանումների և տեղանունների փոփոխությունները՝ կատարելով իրավաբանական ձևակերպում:

Համաշխարհային հանրությունը դեռևս չունի սահմանային խնդիրների միջազգային իրավական ճանաչման մեխանիզմների կայուն լուծումներ: Տարածքային սահմանների հարցը արդիական եղել է սկսած հնագույն ժամանակներից: Այն առանձնակի սրացումներ է ձեռք բերում կայսրությունների, պետությունների միավորումների քայքայման ժամանակ: Պետական սահմանը պարտադիր հատկանիշ է, ինքնիշխան պետության՝ ցուցիչ: Միջազգային գործընթացներում որպես սահմանային խնդիրների լուծման ուղի հաճախ օգտագործվում է ,uti possidetis ita possideatist սկզբունքը: Այն կիրառվում էր դեռևս Հռոմեական օրենսդրությունում և նշանակում է՝ ,Ինչին տիրապետում ես՝ դրան էլ տիրապետիրե:

Համառոտակի ներկայացնենք պետությունների միջև պետական սահմանների սահմանազատման փուլերի իրականացման գործընթացը

**Նախապատրաստական փուլ**

Ձևավորվում է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է՝ առկա իրավական դաշտը, սահմանազատման միջազգային պրակտիկան ըստ տեղի խնդիրների, շրջանառվող տեղագրական քարտեզները, որոնց վրա նշված են վարչական սահմաններ կամ հողօգտագործման սահմանազատումներ (գծեր), կողմերի պատմական և հատկապես սահմանային զարգացումների ժառանգությունը, նյութեր, որոնք առնչվում են մերձսահմանային տարածքների խնդիրներին, երկրների տնտեսության վրա նոր պետական սահմանի, սահմանամերձ տարածքներում բնակչության խնդիրները, առկա կամ ծրագրված ինժեներական կառույցների կենսունակությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, գրանցված բնակչության քաղաքացիության նրանց կրոնական, էթնիկ այլ հարցեր:

Կողմերի բանակցային դիրքորոշումը հիմնված է երկու սկզբունքների վրա.

1. Ընդհանուրից մասնավորի:
2. Առավելագույն և ընդունելի բոլոր կողմերի համար:

**Իրավական կարգավորում** Համաշխարհային հանրությունը ուշադիր է վերահսկում է սահմանային կողմերի ներքին կյանքի իրավական քայլերի օրինականությունը, նրանց հարաբերությունները միջազգային օրենքների՝ ՄԱԿ-ի կանոնադրություն, Հելսինկիի եզրափակիչ ակտի, Փարիզյան համաձայնագրի, հատկապես կարևորելով ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ օրենքների գերակայությանը, բոլոր սահմանների անձեռնմխելիությունը, որոնք կարող են փոխվել միայն խաղաղ ճանապարհով և կողմերի համաձայնությամբ

**Միջազգային սահմանային իրավունք:** Սահմանային վեճերը լուծելիս Միջազգային դատարանն օգտագործում է միջազգային պրակտիկայում կիրառվող uti possidetis- ի սկզբունքը, որի էությունն է հարգել անկախության ձեռք բերման (հռչակման) պահին պետության տարածքային սահմանները: Uti possidetis սկզբունքը ապահովում է նաև վարչական սահմանների վերափոխման համար անհրաժեշտ նախադրյալները ,պետության ներսումե՝ տերմինի ամբողջ իմաստով: Միջազգային դատարանի կողմից «uti possidetis» սկզբունքը կիրառելի է ցանկացած տարածքի, նաև նոր առաջացած անկախ պետությունների նկատմամբ, իսկ բովանդակային առումով նույնական չէ «տարածքային ամբողջականության սկզբունքին»:

**Ազգային իրավունք:** Նոր կազմավորվող կամ անկախացող պետությունները փորձում են իրենց տարածքը պաշտպանել ազգայինով օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Ընտրված սահմանի կամ տարածքի նկատմամբ դրույթները սովորաբար արձանագրվում են անկախության հռչակագրերում, սահմանադրության հոդվածներում, սահմանային, օրենսդրությամբ, բարեկամության, տնտեսական և ռազմական համագործակցության պայմանագրերում, դաշինքներում և այլն:

**Սովորական իրավունք:** Սովորական իրավունքը չգրված կանոնների հավաքածու է, հասարակության մեջ, ժամանակի ընթացքում, արմատավորվելով սովորույթների ու պահվածքի ձևով: Սովորական իրավունքը (դրա նորմերը) համախմբում է կարգավորման կուտակված փորձը, սոցիալական հարաբերությունների փոխանցումը սերնդեսերունդ: Աշխարհի մի շարք երկրներ (Մեծ Բրիտանիա, Կանադա, Նոր Զելանդիան, Ճապոնիա, մասամբ ԱՄՆ և ուրիշներ) մինչ այժմ օգտագործում են հասարակության մեջ ժամանակի ընթացքում արմատավորված սովորույթներն ու պահվածքի նորմերը նույնիսկ սահմանադրական ոլորտում: Սովորական իրավունքի գերակայությունն ամրագրված է նաև ՄԱԿ-ի Ծովային Կոնվենցիայի որոշ հոդվածներում:

**Քարտեզը սահմանային խնդիրների կարգավորման հիմնարար փաստաթղթերից մեկն է:** Քարտեզը աշխարհագրական օբյեկտների, այդ թվում տվյալ պահի դրությամբ սահմանագծի դիրքի արտահայտման գլխավոր փաստաթղթերից մեկն է: Քարտեզին զուգահեռ գործում է նաև սահմանագծի նկարագրական (տեքստային) փաստաթուղթը: Ժամանակի ընթացքում սահմանային կարգավորումներին առնչվող աշխարհագրական օբյեկտները տեխնածին և բնական ազդեցությունների պատճառով կարող են ձևափոխվել կամ իսպատ վերանալ: Այս իսկ պատճառով վարչական և պետական սահմանների ճշգրտման նախապատրաստական, աշխատանքային և բանակցային փուլերում անհրաժեշտ է հաշվի առնել և օգտագործել բոլոր ժամանակների տեղագրական քարտեզները, օդատիեզերական և տեղանքի լուսանկարները, որոնց վրա առկա են սահմանի տեքստային նկարագրում առկա բնական կողմնորոշիչները:

**Հերթապահ (կադաստրային քարտեզ):** Ինչպես նշեցինք կառավարության կողմից լիազորված կազմակերպությունը վարում է այս քարտեզը՝ կատարելով համապատասխան իրավաբանական ձևակերպումներ:

Խորհրդային Միությունում այս աշխատանքներն իրականացվում էին տարածքային ստուգումների միջոցով, պետական գեոդեզիական հսկողության (TIGGN) և գեոդեզիայի և քարտեզագրություն (GUGK) վարչության կողմից: Այս քարտեզներում (մասշտաբ 1: 100 000) գրանցված տվյալները հետագայում հիմք էին հանդիսանում այլ վարչական և տնտեսական քարտեզների ճշգրտման ու թարմացման համար:

**Հերթապահ/կադաստրային քարտեզը հիմնականն աղբյուրն է իրավիճակը վերլուծելիս և բանակցություններին նախապատրաստվելիս: Կան նաև այլ հարակից տեղեկատվությամբ քարտեզներ, ինչպես օրինակ՝ հողերի օգտագործման (հողերի** կադաստրային քարտեզ), **երկրաբանական, հատուկ պահպանվող տարածքների, անտառօգտագործման, օգտակար հանածոների հանքավայրերի, հաղորդակցության ուղիների քարտեզներ, ոռոգման համակարգերի և բնակավայրերի պլաններ:**

**Պատմական ժառանգություն:** Պատմական ժառանգության գնահատումը կարևոր գործոն է այն ներառում է պատմական փաստաթղթեր, ներառյալ պատմական քարտեզները, մարդահամարի տվյալները և հատկապես վարչական քարտեզները, որոնցում արտացոլված է սահմանների փոփոխությունների դինամիկան: Անցյալում կատարված սահմանային փոփոխություններն ուսումնասիրելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ փոփոխությունների իրավական հիմքերին և պատճառներին՝ հիմնվելով նախորդ երկու դարերի փաստաթղթերի վրա:

**Բնական օբյեկտներով կողմնորոշված սահմանազատման միջազգային գործընթացներ:**

Առաջին սահմանները սահմանաքարերի ձևով հայտնվեցին հին Եգիպտոսում, Միջագետքում, Վանի թագավորությունում: Այնուհետև սկսեցին կառուցվել ամրություններ, հսկիչ ամրոցներ: Պատմության ընթացքում բնական սահմանները պաշտպանելու սկզբունքը դիմակայել է ժամանակի փորձությունը և գոյատևել է մինչ օրս ՝ ստանալով ամենակարևորի կարգավիճակ և «պետական սահմանի պաշտպանություն» հիմնարար տերմինը: Բնական արգելքներով, տարածքի աշխարհագրական առանձնահատկություններով պայմանավորված սահմանազատման միջազգային գործընթացը ցույց տվեց, որ այս մոտեցման դեպքում պահպանության, ինչպես նաև ինժեներական կառույցների կայացման տնտեսական ծախսերը էապես նվազում են և չի վտանգվում բնակլիմայական գործոններով պայմանավորված, կողմնորոշիչների կայունությունը:

**Ներկայացնենք բնական սահմանների առավել բնութագրական ձևերը՝**

Լեռ (գագաթ կամ ջրբաժան գիծ), գետ (կայուն հունը), լիճ (կայուն ափի եզրագծով), բնական օբյեկտների, ինչպես օրինակ՝ անտառի, ճահիճի, անապատի եզրագիծը: Ծովի տարածքային կամ ուղղակի ծովային սահմանազատման հարցերը կանոնակարգվում են ՄԱԿ-ի ծովային իրավունքի մասին համաձայնագրով:

Լեռներով սահմանագիծը՝ ջրբաժանի գիծն է, որը կապում է լեռների գագաթները և ամենակայուններից է, բայց դրա սահմանազատումն ու պաշտպանությունը դժվար է:

**Գետերի անցկացվող սահմանագիծը** շատ դեպքերում անցնում են գետի կայուն հունի կենտրոնով: Եթե գետը նավարկելի է, սահմանագիծը անցնում է հոսքի միջնամասով, իսկ կղզիների առկայության դեպքում որոշվում է դրանց պատկանելությամբ և սահմանագիծը գծվում է կղզու և մյուս կողմի ափի միջև: Գետերի սահմաններն ավելի հեշտ է պահպանել, բայց դրանք ավելի մեծ մարդկային ռեսուրսներ և ֆինանսական միջոցներ են պահանջում:

**Սահմանագիծը լճի կամ ջրամբարի ջրային տարածքում:** Սահմանազատման գործընթացում պետք է արտացոլվի բնական ու անօտարելի ռեսուրսներից մարդու՝ բնականից օգտվելու իրավունքը: Ջրի մակերևույթի սահմանազատումը կախված է սահմանագիծի ափի մոտ գտնվող դիրքից, լճի ափեզրի ձևից և բաթիմետրական քարտեզից (խորությունից):

Սահմանազատման գործընթացում առավել հուսալի և նվազ վիճահարույց է տեղանքի աշխարհագրական օբյեկտների բարձրաչափական կապակցումը: Այն հնարավոր է իրականացնել և՛ արբանյակային պատկերների ու քարտեզների վրա և՛ կադաստրային իրավական պլաններում: Ինչ վերաբերվում է ստացվող բարձրաչափական տվյալներին, ապա խնդրի լուծման գլխավոր կռվանը (արգումենտը) կողմերի կողմից ներկայացվող քարտեզների մեկ միասնական datum-ի պատկանելն է (կոորդինատային համակարգ+ բարձրաչափական հաշվարկի ելակետ+ քարտեզագրական պրոեկցիա):

**Ներկայումս աշխարհում արմատավորվում և գործում է մեկ միասնական datum, WGS 84 (**World Geodetic System 1984**): Աշխատանքային խմբի խնդիրն է**

բացահայտել հողերի օգտագործման իրավունքի, հաղորդակցության ուղիների և այլ կարևոր կառույցների նախագծման և կառուցման ժամանակ կիրառված գեոդեզիական ելակետերի տարբերության հնարավոր առկայությունը, ինչը պայմանավորված է սահմանազատում իրականացնող կողմերից յուրաքանչյուրում նախկինում կիրառվող համակարգերի տարբերությամբ: Աշխատանքային խումբը բարդ խնդիր ունի ՝պատրաստել առաջարկներ լուծել այդ խնդիրները նվազագույն կորուստներով:

**Արհեստական օբյեկտներով պետական սահմանի սահմանազատումը:** Բանակցությունների նախնական փուլում անհրաժեշտ է գույքագրում կատարել պարզելու վերոհիշյալ օբյեկտներից որոնք են հատվում կամ շոշափվում պետական սահմանի հետ: Որոշում են դրանց պատկանելությունը և նշանակությունը կողմերի և հատկապես սահմանամերձ բնակչության համար:

Առավել վիճահարույց է հաղորդակցության ուղիների խնդիրը: Միջազգային իրավունքի պարտադիր պահանջներ են՝

- բնակավայրերը չպետք է մնան մեկուսացված վիճակում,
- ճանապարհների հատվածները, որոնց երկայնքով անցնում է սահմանը, պետք է փոխանցվի այս կամ այն կողմին հաշվի առնելով, թե ում միջոցներով է ճանապարհը կառուցվել և որ պետության համար է դա առավել կարևոր,
- սահմանագիծը անցնում է ճանապարհի երկայնքով, այս դեպքում, եթե չկան մարդկանց և ապրանքների տեղաշարժը վերահսկելու կարողություններ, ապա ճանապարհը պետք է փակվի մինչև դրանց ստեղծումը,
- եթե ճանապարհի մի հատվածը տրվում է բանակցային կողմերից մեկին, ապա նրա լայնության չափով հակառակ կողմին տրամադրվում է տարածք և սահմանագիծը տեղաշարժվում է: այնպես, որ բանակցային գործընթացում հնարավոր լինի պլանավորել ճանապարհների հատվածների փոխանակումներ,

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (OBCE) նյութերի և համաշխարհային փորձի ուսումնասիրության հիման վրա կազմեց՝ քարտեզագիր հետազոտող Տիգրան Բաբայանը:

**Հիմնական փաստաթղթեր՝** Հելսինկիի եզրափակիչ ակտ -1975թ., Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիա – 1990թ., Հելսինկիի փաստաթուղթ - 1992թգ, Բուդապեշտի գագաթաժողովի փաստաթուղթ - 1994թ., Եվրոպական անվտանգության խարտիա – 1999թ., Աստանայի հռչակագիր – 2010թ.:

***ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ***
***Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն***

# Մնայուն արժեքների աշխարհում

Կյանքի յուրաքանչյուր շրջան իր մնայուն հետքն է թողնում մարդու աշխարհայացքի, արժեհամակարգի և պատկերացումների վրա: Անձի ինքնաճանաչման, մտահորիզոնի ընդլայնման, բարոյական զարգացման համար առանցքային դեր ունի կրթությունը. այն օգնում է վերլուծաբար մոտենալ խնդիրներին, տարբերել իրականության ու պատրանքի սահմանագիծը, խորքային դատողությունները գերադասել մակերեսային եզրահանգումներից...

Բարձրագույն կրթությունը սկսվում է համալսարանում և շարունակվում ողջ կյանքի ընթացքում: Անձի կատարելագործումը ենթադրում է ներաշխարհի շարունակական հարստացում, որն ինքնազարգացման ճանապարհն է:

Բանասեր և մանկավարժ դառնալու ցանկությունն ինձ բերեց ՀՊՄՀ: Ուսանողական տարիները հետաքրքիր էին և իմաստալից:

Դասերին հաճախել եմ ուրախությամբ և սիրով:

Ինձ համար շատ ոգևորիչ էր այն, որ դարձա ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի 2018 թվականի լավագույն ուսանողը: Այդ մրցանակը որքան հաճելի, նույնքան էլ պարտավորեցնող էր:

Գրականագիտական զեկույցներով մասնակցեցի գիտաժողովների՝ ստանալով ջերմ ու հաճելի տպավորություններ:

Բանասերի մասնագիտությունն ինձ հնարավորություն տվեց մուտք գործել ազգային արժեքների, մշակութային գլուխգործոցների, գրական անմահ կոթողների գանձարանը: Ուսումնասիրեցի հայ և արտասահմանյան գրականությունը, գրապատմական զարգացումների ընթացքը, նախադրյալներն ու արդի միտումները, ծանոթացա գեղարվեստական արժեք ներկայացնող բացառիկ բնագրերի, որոնք դարերի ճամփորդ դարձած, քայլում են հավերժին ընդառաջ: Ես նավարկեցի բառերի անեզր օվկիանում, լեզվաբանի հայացքով քննեցի ձևաբանական, շարահյուսական, հնչյունափոխական իրողությունները, պատմական զարգացման օրինաչափությունները, շրջափուլերը... Մոտեցա բանասիրական մտքի ակունքներին, նորովի գնահատեցի հայագիտության ազգապահպան դերը:

Յուրաքանչյուր քննաշրջան ինքնաճանաչման, սեփական ներուժի բացահայտման և գնահատման մի հնարավորություն էր: Հարցատոմսերում ամփոփվում էր մեր դարավոր արժեքների պատմությունը, «արևահամ բառի» ջերմությունը, ուսուցչի հայրենանվեր աշխատանքը...

Արդյունավետ և հետաքրքիր անցավ մանկավարժական պրակտիկան: Ես ճանաչեցի և արժևորեցի մանկավարժի առաքելությունը, գիտակցեցի նրան վերապահված պատասխանատվությունն ու դերը սերունդներ կրթելու գործում:

Ճանաչողական պրակտիկայի շրջանակներում ուրվագծվեցին ուսուցչի առջև դրված խնդիրներն ու նպատակները, որոնցից մեկը դասարանի լիարժեք կառավարումն է:

Շատ տպավորիչ էր կիրառական պրակտիկան. ինձ ոգևորում էր հատկապես այն հանգամանքը, որ հնարավորություն ունեցա հանդես գալ բուհի մանկավարժի՝ դասախոսի դերում: Թեև այս պրակտիկան անցավ առցանց ձևաչափով, այդուհանդերձ, կարողացա գործնականում կիրառել տեսական գիտելիքները, բախվել դասավանդման այս կամ այն խնդրին և գտնել համարժեք լուծումներ:

Ամփոփիչ պրակտիկան նույնպես ներաշխարհիս վրա թողեց իր մնայուն հետքը: Աշակերտների կարգավիճակում իմ համակուրսեցիներն էին, ովքեր ուսանող լինելով հանդերձ, կարողացան լիովին ստանձնել աշակերտի դերը՝ նպաստելով դասի անխաթար և հագեցած ընթացքին: Կրկին հատեցի տեսականի և գործնականի միջև եղած սահմանագիծը, փորձեցի մանկավարժորեն մոտենալ աշակերտական խնդիրներին, ունակություններին և տարիքային առանձնահատկություններին:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բանասիրական ֆակուլտետի դեկան պարոն Աշոտ Գալստյանին՝ ուշադիր, անաչառ և մանկավարժական նրբանկատություն արտահայտող վերաբերմունքի համար: Նրա անմիջականությունը չի կաշկանդվում տարբեր պայմանականություններով:

Շնորհակալ եմ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ անմոռանալի դասախոսությունների և ակադեմիական հաճելի մթնոլորտի համար:

Երախտագիտությունս եմ հայտնում «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր տիկին Սիլվա Ասրյանին: Ուրախ եմ, որ այս տարիներին ինձ հնարավորություն ընձեռվեց տպագրվել թերթում:

Իմ ուսանողական տարիներն անցան մնայուն արժեքների այն աշխարհում, ուր հնչյունները բառեր են դառնում, իսկ բառերը՝ գրական կոթողներ:

***Ամալյա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ***
***ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի***
***2020-2021 թթ. շրջանավարտ***

# Թեորեմն ապացուցված է ...

Դպրոցական նստարանից երազում էի ուսանող դառնալու մասին, իսկ այսօր չեմ ուզում հրաժեշտ տալ ուսանողական կյանքին...

«Կյանքի ամենագունեղ տարիներն ուսանողական տարիներն են...»: Համալսարան մտնելու առաջին իսկ օրից այս արտահայտությունը փորձում էի ապացուցել որպես թեորեմ և նույնիսկ այսօր չեմ ուզում վերջացնել այս թեորեմն ապացուցելու գործընթացը:

Համալսարան մտնելուն պես վերցրի թուղթ ու մատիտն ու սկսեցի նկարել: Այս չորս տարիների ընթացքում ունեցած հաջողություններս նկարում էի կապույտ մատիտով, իսկ ձախողումներս՝ կարմիր, այսօր արդեն նկարում եմ միայն կապույտ գույնով, կարող եք տեսնել: Յուրաքանչյուր ձախողում մի նոր հաջողության հիմքն էր, և դրա համար կարմիր գույնը ժամանակի ընթացքում փոխվեց կապույտի: Կյանքի այս փուլում սովորեցի պայքարել, սովորեցի առաջ շարժվել փոքր քայլերով, սովորեցի գնահատել ժամանակը և այս ամենի համար շնորհակալ եմ մեզ միշտ հասկացող և մեր կողքին կանգնած դասախոսներին:

Աբովյանական լինելն ինձ համար հպարտություն է, և այսօր բարձր ու խրոխտ ձայնով կարող եմ ասել, որ ես եղել եմ ու կշարունակեմ լինել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանող:

Բացվում է դուռ դեպի նոր ուսանողական կյանք, որտեղ մեզ սպասվում են նոր հաջողություններ և ձեռքբերումներ: Արդեն ժամանակն է նոր թուղթ ու մատիտ վերցնելու... և թեորեմը ևս մեկ անգամ ապացուցելու...

***Վարդ ՄԿՐՏՉՅԱՆ***
***Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի***
***բակալավրի 2020-2021 ուստարվա շրջանավարտ***

# Երազանքներն իրականանում են: Այլապես բնությունը մեզ չէր օժտի երազելու ունակությամբ

Մեծ ու փոքր երազանքների հետևից վազող քանի՞ մարդ գիտեք կյանքում. նրանց թվին ավելացրեք նաև ինձ: Ինձ նման որքա՜ն շատ մարդ կա. ես միակը չեմ: Յուրաքանչյուրն իր ուղին է փնտրում, ինչպես որ ես: Ես էլ իմ ուղին էի փնտրում և կարծես թե գտել եմ ու անցել դրա մի փոքրիկ, բայց շատ կարևոր ու պատասխանատու հատվածը: Հպարտորեն բարձրաձայնում եմ՝ այժմ ես Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտ եմ՝ գերազանցության դիպլոմով:

Թվում է՝ երեկ էր դեռ, երբ մեր առաջին քայլերն էինք անում դեպի դպրոց՝ այնքան

ոգևորված, այնքան ուրախ: Մտածում էինք՝ դպրոցն էլ մի նոր խաղերի տեղ է, դե այդ տարիքում խաղային գործունեությամբ զբաղվելը երեխայի համար առաջին տեղում է: Մտնելով դպրոց՝ հասկացանք, որ այստեղ, խաղերից բացի, մեզ տալու են թերևս կյանքում ամենակարևորը՝ գիտելիք, կրթություն, մեր մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը խորությամբ ճանաչելու հնարավորություն: Կյանքի այդ շրջափուլն էլ անցանք և չհասկացանք էլ ոնց հասանք դպրոցն ավարտելուն: Մեր կյանքի վճռորոշ պահերից մեկը, երբ պետք է կողմնորոշվենք մասնագիտության ընտրության հարցում: Պետք է խոստովանեմ, որ այդ հարցում ես երկար մտածելու կարիք չեմ ունեցել: Ինձ միշտ հոգեհարազատ է եղել ուսուցչի կերպարն՝ իր բոլոր առանձնահատկություններով: Հենց տարրական դասարանների ուսուցիչ լինելուն ինձ մղել է երեխաների հանդեպ ունեցած մեծ սերն ու այն զգացումը, որ մի ամբողջ սերունդ կրթելու և դաստիարակելու հնարավորություն կունենամ, բայց ինձ երբեք չի լքել ու միչև հիմա էլ չի լքում վախի զգացումը, որն առաջ է գալիս այն մեծ պատասխանատվության գիտակցումից, որն ունի դասվարը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում սովորելու հնարավորություն ստանալն ինձ համար մեծ երջանկություն էր: Հիշում եմ՝ ինչպես առաջին անգամ մտա համալսարան՝ արդեն որպես ուսանող; Նոր, անծանոթ միջավայր, փոքրինչ կաշկանդվածություն, լարվածություն, որը տևեց ընդամենը մեկ-երկու օր:

Ծանոթությունը կուրսընկերուհիներիս հետ ամենակարևոր ձեռքբերումներից մեկն էր: Նրանք ինձ համար դարձան հարազատ մարդիկ, շատերի հետ ստեղծվեցին ամուր, ինձ համար շատ արժեքավոր ընկերական հարաբերություններ:

Գիտելիքների առումով խոսքերն ավելորդ են: Առաջին իսկ կուրսից մեր՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի (և ոչ միայն), դասախոսական կազմի հետ ծանոթությունից ի վեր մենք ստացել ենք բազում գիտելիքներ, տարբեր առարկաների միջոցով հմտացել մեր գործում: Իհարկե եղել են նաև դժվարություններ, առանց դրանց չէր էլ կարող լինել, դրանք ամենուր են, ուր էլ որ գնալու լինենք, առանց դրանց ամեն բան փոքր-ինչ անհետաքրքիր կլիներ, այնպես չէ՞: Երբեմն հուսահատվել ենք, որևէ առաջադրանքի, հանձնարարության բարդության աստիճանը ստիպել է մտածել, որ մեզ մոտ ոչինչ չի ստացվի, որ շատ հնարավոր է ձախողվենք, բայց հենց այդ պահերին է, որ զգալով մեր դասախոսների աջակցությունը, ստանալով նրանց օգնությունն ու խորհուրդները, տեսնելով մեզ ամեն ինչում օգնելու նրանց պատրաստակամությունը, ես կրկին շարժվել եմ առաջ, հաղթահարելով բոլոր դժվարությունները:

Իսկապես ճիշտ է ասված, որ երեխաներն ունեն տեսնելու, մտածելու և զգալու իրենց հատուկ ունակությունը, և չկա ավելի անմիտ բան, քան այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը: Դա թերևս ամենից լավ հասկանում են ուսուցիչները, ովքեր այնքան մոտ են գտնվում նրանց: Մենք իսկապես երջանիկ մարդիկ ենք, որ հնարավորություն ունենք մեր ողջ կյանքում աշխատել երեխաների հետ: Ուսուցչի ունեցած ազդեցությունը երեխաների վրա շատ մեծ է և կարևոր: Ինչպես ասել է Հենրի Ադամսը. «Ուսուցիչը հպվում է հավերժությանը. ոչ ոք չի կարող ասել, թե երբ կավարտվի նրա ազդեցությունը»:

Ես միշտ ձգտել եմ ձեռք բերել հնարավորինս շատ գիտելիքներ, մանկավարժական որակներ, չէ՞ որ ուսուցիչները պետք է իրենց մասնագիտության գծով կանգնած լինեն արդի գիտելիքների լիակատար բարձրության վրա (Դ. Մենդելեև), որպեսզի կարողանան ճիշտ աշխատել երեխաների հետ և նրանց հնարավորինս շատ հարուստ գիտելիքներով զինված ճանապարհել կյանք: Այստեղ տեղին է հիշել Կոնֆուցիուսի հայտնի խոսքերը. «Եթե ձեր ծրագիրը նախատեսված է մեկ տարվա համար, ցանեք բրինձ: Եթե ձեր ծրագիրը հարյուրավոր տարիների համար է՝ ծառ տնկեք: Եթե ձեր ծրագիրը ամբողջ կյանքի համար է՝ կրթեք երեխաներին»:

Այժմ կանգնած եմ դպրոց մտնելու շեմին, է՛լ ավելի պատասանատու մի քայլի առաջ: Իմ երազանքը մասամբ իրականացել է, ես գործել եմ նրա իրականացման ուղղությամբ, հավատացել և աշխատել այն դարձնել իրականություն: Չէ՞ որ իզուր չէ ասվել. «Ոչ միայն երազեք, այլևս գործեք: Մանկության տարիներին մեզ հաճախ են ասում՝ մի դադարեք երազել, հավատացեք ձեր երազանքներին: Բայց մոռանում են ասել, որ պետք է ոչ միայն հավատալ երազանքներին, այլև աշխատել դրանք իրականություն դարձնելու ուղղությամբ: Երազանքները միայն մտքեր են, ուրիշ ոչինչ: Միայն մեր գործողություններն են, որ փոքրիշատե կարող են փոխել մեզ շրջապատող աշխարհը»: Այնպես որ սկսեք գործել, կյանքի կոչել ձեր ամենանվիրական երազանքները: Ես նույնպես աշխատում եմ այդ ուղղությամբ. ձգտում եմ հասնել իսկական ուսուցչի բարձր կոչմանը, արժանանալ երեխաների անկեղծ սիրուն, լինել իմ կոչմանն արժանի մասնագետ:

Իմ երազանքի իրագործման ճանապարհին մեծ է Մանկավարժական համալսարանի դերը, որտեղ էլ հենց մեզ սովորեցնում են, թե ինչ է նշանակում լինել իսկական ուսուցիչ, մանկավարժ՝ օժտված բոլոր այն անձնային և մասնագիտական որակներով, որոնք պարտավոր է ունենալ յուրաքանչյուր ուսուցիչ: Ես երազում եմ և ձգտում հասնել այդ մակարդակին և համոզված եմ, որ կհասնեմ նրան, ինչի մասին երազում եմ, չէ՞ որ ինչպես ասել է Ջոն Ափդայքը. «Երազանքներն իրականանում են: Այլապես բնությունը չէր օժտի մեզ երազելու ունակությամբ»:

***Լալա ՍՏԵՓԱՆՅԱՆ***
***Սկզբնական կրթության***
***ֆակուլտետ***
***«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության***
***շրջանավարտ***

# «Եվ մեր հոգու ձայնն է ասես դպրոցական վերջին զանգը»

*Հնչում է վերջին զանգը,*
*Կանչում է մեզ նոր կյանքը,*
*Պիտի գնանք, պիտի գնանք,*
*Եկել է ժամանակը…*

Այո, բոլորի կյանքում ամեն ինչ իր ժամանակն ունի: Մանկավարժական համալսարանի N 57 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի 25 շրջանավարտների համար էլ հունիսի 19-ը հրաժեշտի օր էր, հրաժեշտ սիրելի դպրոցին, ուսուցիչներին, դասարանական կոլեկտիվին, անգամ խենթություններին…

Վերջին զանգի արարողությունն ուսուցիչներին, ծնողներին ու հյուրերին հուզմունքի բազմաթիվ պահեր պարգևեց: 9-րդ դասարանի շրջանավարտները երգով, պարով ուսումնքով ամփոփեցին անցած ինը տարիները, մի վերջին անգամ հարազատ դպրոցի կամարների ներքո «հստակեցրին» վերցրածը՝ ստացած գիտելիքները, որոնցով նոր կյանքի դռներն են բախելու, շարունակելու են ավագ դպրոցում ուսանել՝ իրենց հետ տանելով գիտելիքներ ու ավանդույթներ, դպրոցական ճաշակ ու դասարանական մշակույթ, անգամ բոլոր չարաճճիություններն ու խենթությունները, այն ամենն, ինչով ապրեցին այդ տարիներին և ինչ հասցրին սովորել սիրելի ուսուցիչներից: Ապրեցին թե՛ ուրախ, թե՛ տխուր պահեր և հոգիներում ամբարեցին ջերմ հուշեր, որոնց էլ ապավինելով, պիտի անեն հաջորդ քայլը: Չէ՞ որ նույնիսկ ամենաբարի հեքիաթներն ավարտվում են…

«Եթե մենք այսպիսին ենք՝ ձեզ ենք պարտական, ձեր մանկավարժական աշխատանքի արգասիքն ենք… Ներեցեք մեզ, եթե պատանեկական սխալներ ենք թույլ տվել, խենթություններ արել…»,-ինն երորդցիները իրենց տարիքին բնորոշ չարաճճիությունների համար հայցեցին ուսուցիչների ներողամտությունը: Հուզմունքը, ուրախությունն ու տարբեր իրարամերժ զգացողություններ թևածում էին դպրոցական բակում՝ իրար կապելով երախտագիտություն ու ներում արտահայտող խոսքերը: Երգն ու պարն էլ նվիրեցին Հայրենիքին և այն ամենին, որ մի բառով կոչվում է Հայաստան, որովհետև՝

«Հայաստանը իմ անունն ու ազգանունն է…»:

Բարձրաձայն մտորեցին ու հիշեցին. «Ձեր հոգատար

ձեռքերի տակ հասակ ենք առել, ձևավորվել որպես մարդ, սովորել տարբերել չարն ու բարին, լավն ու վատը…», նաև պարտավորվեցին՝ ուր էլ լինեն, չաղավաղեն սիրելի դպրոցի դեմքն ու դիմագիծը, բարձր պահեն ուսուցիչների անունն ու պատիվը:

«Իսկ մեր դպրոցն ու դասարանը երբեք չենք մոռանա»՝ խոստովանեցին Ռուբեն Հախվերդյանի ծանոթ երգի հնչյունների ներքո: Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանին, դասղեկ Մերի Բաբայանին ու բոլոր ուսուցիչներին մաղթեցին՝ սերունդներին կրթելու և դաստիարակելու ուժ ու կորով:

Միջոցառումն ամփոփեցին իրենց՝ 2020-2021 ուտարվա շրջանավարտներին բնութագրելով. բազմահմուտ դասարանական կոլեկտիվում ունեին էլ չեմպիոն ու պարող, երգիչ ու ասմունքի վարպետ, ֆուտբոլիստ ու կիթառահար…Մի խոսքով՝ դասարանական հարուստ կոլորիտ, գունապնակ՝ իր ամենագեղեցիկ գույներով.

*Ես ունեմ մի պատմություն*
*Իմ ու քո պատմությունն…*

Հայտնի երգի մեղեդիների ներքո տխրեցին ու հուզվեցին, ուրախացան ու արտահայտվեցին.

*Դպրոցի ճամփան ոլոր-մոլոր,*
*Տարիներն անցան գլոր-գլոր,*
*Ժամանա՛կ, մի պահ առել ես կանգ,*
*Դու դարձել ես Վերջին զանգ…*

Այս էլ որերորդ ինն երորդցիներին է հրաժեշտ ու նաև կյանքի ուղեգիր տալիս դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը. «Այո, ավարտվեց դպրոցի ոլոր-մոլոր ճամփան, որը ձեզ համար պիտի դառնա մի նոր լավի սկիզբ, ապագայի պայծառ ճանապարհ: Դուք դեռ գնալու եք ավագ դպրոց, ձեզ հետ կտանեք այստեղի հիշողությունները, այն ջերմությունը, որ ստացաք հարազատ ուսուցիչներից՝ առաջին ուսուցչուհի, դասվար Տաթևիկ Աբրահամյանից, ընկեր Բարեղամյանից, ով ձեզ ընդունեց տարրական դպրոցն ավարտելուց հետո, դասղեկ ընկեր Բաբայանից ու բոլոր մյուս ուսուցիչներից:

Իսկապես տարիների հետ դասարանական լավ կոլեկտիվ է ձևավորվել, այո, նաև խենթություններ եք արել…

Սիրեք ձեր հայրենիքը՝ ձեր անուն, ազգանունը»՝ ամփոփեց տնօրենը, ապա շնորհավորեց ու շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին ու ծնողներին, իսկ 9-րդ դասարանի շրջանավարտներին մաղթեց բարի երթ և հաջողություններ»:

Դպրոցի բակում ծայր առած հայկական «Յարխուշտան» միավորեց շրջանավարտներին իր շուրջը՝ շրջանավարտներին մոտեցնելով ազգային արմատներին:

***Միլվա ԱՍՐՅԱՆ***

## Պատերազմներ կան, որ չեն ավարտվում

«Սևազգեստ մայրերի համար պատերազմներն սկսվում ու չեն վերջանում» (Հովհ. Մելքոնյան): Մորս համար կիսով չափ էր ավարտվել. ես կիսով չափ էի վերադարձել տուն: Մայրս ամեն անգամ տեսնելով մի ոտքս՝ չգիտես ուրախանո՞ւմ, թե՞ տխրում էր, որ որդին կա ու որ մի ոտք չունի: Հայի բնավորություն է. հարմարվել ցանկացած իրավիճակի՝

գտնելով ուրախության գեթ մի նշույլ: Իհարկե, կարող էի և չվերադառնալ:

Հիմա մայրս նայելով կոշիկներիս՝ խնամքով թաքցնում է հուզմունքը՝ գաջ ոտքիս կոշիկը միշտ նոր է: Ի՞նչ անել: Խանութից գնել մե՞կը, ոչ, այդպես չի վաճառվում, եթե անգամ փախել ես մահվան ճիրաններից:

Երբ փոքր տղա էի, կարդացել էի Ազնավուրի կենսագրությունն ու ինձ ամենից շատ հուզել էր այն փաստը, որ Ազնավուրն էլ մի ժամանակ սուղ պայմաններում է մեծացել և երազել է շատ կոշիկներ ունենալու մասին: Նրա երազանքն իրականացավ: Ես էլ ոգևորվեցի նրանով: Եթե մի հայի հաջողվել է շոշափել երազանքը, ապա ինձ էլ կհաջողվի: Ես ձեռքս երկարեցրել էի, ա՛յ-ա՛յ՝ դիպչելու էի երազանքիս, գնելու էի բոլոր չունեցած կոշիկներս, պատերազմը քթիս տակից փախցրեց երազանքս՝ փոխարենը տալով երկու հենակ: Իսկ դուք կարծում եք՝գարունը բերում են մանուշակներն ու վարդե՞րը, ոչ, գարունը բերում են հենակավոր տղաները, որոնց նայում են խղճահարությամբ, բայց օգնել չկարողանալով: Գարնան հետ մենք ենք դուրս գալիս արևի տակ. մենք՝ ձեր խիղճը, որ կամա-ակամա շարժվում է:

Օրերս մի գեղեցիկ աղջնակ հեռվից ինձ էր նայում, կարծես ուզում էր մոտենալ, բայց քարացել էր տեղում կանգնած: Մոտենար ի՞նչ ասեր: Հայացքն ամեն ինչ ասաց: Ես և իմ նման շատ տղաներ կուզեինք այլ հայացքներ՝ գեղեցիկի կողմից: Հոգատար նամակներ շատ էինք ստանում ռազմի դաշտում ու ամեն գնով ուզում էինք հաղթել մահվանն ու վերադառնալ, վերադառնալ ու գրկել մեր աղջիկներին: Ինչ էլ պատահեր՝ պիտի հետ դառնայինք, որովհետև թիկունքում ծոր էր տվել սերը. պիտի շարունակվեր կյանքը: Մահվան հաղթանակի վարձքը սերն էր, սերը՝ աշխարհի սկիզբը, աշխարհի շարունակությունը, բայց շարունակությունը ոմանց վիճակված էր անցնել մենակ:

Հիմա հորս կողքին նստած կարում եմ ինձ բաժին հասած մի հատիկ կոշիկը:

***Օֆելի ԴԱԼԱՔՅԱՆ***
***ՀՊՄՀ շրջանավարտ***

ԵՐԳ-երաժշտությունը նրա տարերքն է, էությունը, յուրաքանչյուր նոր ստեղծագործություն ծնվում է նրա հոգում և դուրս հորդում ինքնաբուխ…

Որևէ մեկը նրան չի պարտադրել ստեղծագործել. դա հոգեվիճակ է, որ բխում է ներաշխարհից, ինչը Վարդան Գալստյանը դարձնում է երգ և փոխանցում իր ունկնդիրներին:

Քիչ է լինում, երբ երգահանի, կատարողի և գործիքավորողի աշխատանքը համատեղվում է. Վարդանի դեպքում դա այդպես է:

Նա ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության բաժինը բակալավրի ուսուցման համակարգում, այնուհետև ընդունվել մագիստրատուրա: Վերջերս հաջողությամբ ավարտեց քննաշրջանը և փոխադրվեց մագիստրատուրայի երկրորդ կուրս:

Վարդան Գալստյանը հիմնականում գրում է հայրենասիրական երգեր, երբեմն էլ սիրային թեմայով երգեր են ծնվում: Հայոց բանակում ծառայությունից վերադառնալուց երկու ամիս անց սկսվեց Ադրբեջանի սանձազերծած պատերազմը: Վարդանի երգացանկում շատ են Հայաստանին ու Արցախ աշխարհին նվիրված երգերը: 50-ց ավելի հեղինակային ստեղծագործությունները ծնվել են նրա հույզերից ու ապրումներից: Ստեղծագործություններն էլ բազմաժանր են:

Ավարտել է Բարսեղ Կանաչյանի և Պյոտր Չայկովսկու անվան երաժշտական դպրոցները, տիրապետում է կիթառին և նվագում դաշնամուր: Թերևս սա այն հիմնաքարն է, որի վրա Վարդանն օրեցօր կառուցում է իր երգարվեստի շենքը: Նպատակ ունի կազմակերպել հեղինակային ստեղծագործությունների անհատական համերգ:

Ժամանակակից երգարվեստի մասին խոսելիս նկատում է՝ ժամանակ է պետք, որ այդ դաշտը մաքրվի, հանդիսատեսին պետք է մատուցել որակյալ ու բարձրաճաշակ երգեր: Ճանաչված լինելու բարդույթով չի տառապում, ասում է՝ դա ժամանակի խնդիր է: Իր ստեղծագործություններն էլ ներկայացնում է սոցիալական հարթակներում:

Ով ճանաչում է Վարդան Գալստյանին, գիտի նրա համեստ կեցվածքի մասին: Շատ ժամանակ է անցկացնում կոնսերվատորիան ավարտած իր ընկերների հետ, նաև հպարտանում է այն դասախոսներով, ովքեր իրեն տվել են երաժշտական կրթություն ու շարունակում են իր առջև բացել երգարվեստի խորհրդավոր աշխարհը: Արկադի Շեկունցին համարում է ոչ միայն մեծ Ուսուցիչ, այլև փորձառու մասնագետ, հրաշալի մարդ ու գիտնական:

Մանկավարժական համալսարանի տարեգրությունը գրում են նաև այսպիսի ուսանողները: Երիտասարդներ, որոնց հետ համալսարանը երիտասարդանում է, ուժ առնում:

Մնում է բարի երթ մաղթենք երիտասարդ ստեղծագործողին, որ իր ընտրած ոչ դյուրին ճանապարհն անցնի վստահ ու հնարավորինս առանց խութերի՝ հայ երիտասարդին վայել պատվախնդիր ու արժանապատիվ կեցվածքով: Իսկ հոգուց ու սրտից ծնված մեղեդին կօգնի հաղթահարել դժվարությունները և ապագային նայել լուսավոր հավատով:

**Սիլվա ԱՍՐՅԱՆ**

## Ներկայացնում ենք մրցույթ-քարոզի լավագույն աշխատանքները

# ԻՍԿ ՀԱՋՈՐԴԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԼԻՆԵԼ ԴՈՒՔ

Աբովյան, Աբեղյան ու Աղայան, Գոշ ու Տաթևացի, Շանթ ու Հինդիլյան, իսկ հաջո՞ղդը... ո՞ւմ անունը կավելացնեիք հաջորդը այս շարքում. միգուցե Ձեր դպրոցի գրականության ուսուցչին, իսկ միգուցե համալսարանական պրակտիկայի մեթոդիստին կամ Ձեր սիրելի դասախոսին, իսկ Ձե՞զ.. Ձեզ պատկերացնու՞մ եք այդ շարքում:

21-րդ դարը մարտահրավերների դար է. տեխնոլոգիաների ու բնության, իրական ու երևակայական աշխարհի, բարձրաձայնվող իրավունքների ու քողարկվող պարտականությունների, մանկավարժի ու համակարգչի, բովանդակության ու ձևի պայքարի դար:

Այս ամենի քաջ գիտակցումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այսօր նախկինում ստեղծված կանոններն ու օրենքները երբեմն չեն աշխատում, անցյալին ու հնին տրվող բացասական գնահատականները ու դրանցից խորշելը, հասարակության մեջ մանկավարժի դերի ու գործունեության՝ ավանդական ու նեղ ընկալումը երբեմն կարող են սահմանափակել Ձեզ ու Ձեր մանկավարժական ստեղծագործական իմացության տիրույթը:

Այս ամենին ի լրացում, Ձեր կյանքում ու աշխատանքում երբեմն կհանդիպեք մարդկանց ու մասնագետների, ովքեր գուցե ոչ միտումնավոր, սակայն Ձեր աշխատանքը կփորձեն սահմանափակել ու արժեզրկել: Ձեզ կարող են հիասթափեցնել աշխատավարձի ու այլատիպ գործոնների հանգամանքը, շրջապատող տեղեկատվական տեխնոլոգիաներով ու մարքետինգով հագեցած իրադարձությունները:

Իսկ ի՞նչ է մնում Ձեզ, ինձ ու բոլորիս՝ մեզ՝ մանկավարժներիս՝ անել այս իրավիճակում:

Այս ամենի իմացությունն առաջին հերթին մեզնից պահանջում է վստահաբար դիրքավորել մեզ ու մեր մասնագիտությունը փոփոխվող հասարակության ամենօրյա ակնկալիքների, երբեմն չհիմնավորված պահանջների ու հնարավորությունների շրջափուլում: Մեր այսօրվա առաքելություն է դառնում՝ լինել հաստատակամ ու վստահ մեր մասնագիտության մեջ, հավատալ մեր երեխաներին, ու առհասարակ մանկավարժական ներազդեցության ուժին և հնարավորություններին: 21-րդ դարի հրամայական է դառնում Ձեզնից յուրաքանչյուրի կողմից սեփական առաքելության գիտակցումն ու արժևորումը, նպատակների ու գործառույթների իմացությունը, և վերջապես վարպետությունը Ձեր աշխատանքում... այսօրվա գլխավոր հերոսների ու դերակատարիների՝ երեխաների հետ աշխատանքում:

Վստահ եմ, բազմիցս եք հարցրել ինքներդ Ձեզ, թե ինչի մասին է իրականում մանկավարժությունը և ինչ դերակատարում ունի մանկավարժն առհասարակ երեխայի կյանքում:

Պատասխանները որքան բարդ, նույնքան նաև պարզորոշ ու տեսանելի են: Հիշեք՝

■ Ո՞վ, եթե ոչ դուք այսօր պետք է խոսեք երեխայի բարձրարժեքության գաղափարի, երեխային ճանաչելու, ընդունելու և հասկանալու կարևորության մասին,

■Ո՞վ, եթե ոչ դուք պետք է ստեղծեք պայմաններ ու միջավայր երեխայի ապրելու, գործելու, փորձ ձեռք բերելու և ինքնազարգացման, նրա կողմից ազատության գաղափարի գիտակցման ու ընդունման համար,

■ Ո՞վ, եթե ոչ դուք պետք է նպաստեք երեխաների ձայնի լսելիությանը, իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկման գործընթացում նրանց մասնակցության ապահովմանը,

■ Ո՞վ, եթե ոչ դուք պետք է լինեք Հայաստանում երեխաների իրավունքների մասին օրենքով սահմանված կյանքի, առողջության պահպանման ու քաղաքացիության, բռնությունից պաշտպանության, հանգստի ու իրավասահավասարության իրավունքների ջատագովը,

■ Եվ, վերջապես ո՞վ, եթե ոչ դուք պետք է դառնաք երեխայի անձի նկատմամբ հարգանքի, նրա իրավունքների պաշտպանության և անվտանգության երաշխավորը:

Հավատացեք, որ երեխայի անձի լիարժեք զարգացումը, օգնող հարաբերությունների մթնոլորտի առկայությունը, մարդկայնացված միջավայրի կազմակերպումը և առհասարակ հասարակության հումանացումն ու առողջացումը առաջին հերթին Ձեր ձեռքերում է:

Փորձեք ամեն երեխայի մեջ գտնել ու բացահայտել այն պոտենցիալը, այն դրականն ու կարևորը, որի կարիքը նա ու մենք բոլորս այդքան ունենք: Գիտեմ, դա բարդ է, սակայն ոչ անհնարին:

Ուստի եկեք հասկանանք, որ մանկավարժությունն ու մանկավարժը ոչ միայն ճիշտ բանաձևերի ու օրինաչափությունների, այլև սխալվելու փորձի, սխալվելու հնարավորության ընձեռման և դրանից երկուստեք դասեր քաղելու, սովորելու մասին է: Ուստի, մի՛ վախեցեք սխալվել:

Հիշեք, որ մանկավարժությունը ոչ միայն ուսուցման ու դաստիարակության տեսությունների վերաբերյալ գրքերի, այլև առաջին հերթին աջակցող հարաբերությունների, ողջամիտ պահանջկոտության, ինքներդ Ձեզ, Ձեր թիմի անդամների ու երեխաների հետ երկխոսության մասին է:

Գուցե վերամբարձ թվա, բայց հիշեք, որ երեխաների ճակատագիրը հաճախ Ձեր՝ ուսուցիչների ձեռքում է, ովքեր պետք է մղեն նրանց ավելի մեծ բարձունքների հասնել և դառնալ հաջողակ. հաջողակ անհատ աշխատանքում ու ընտանիքում, երջանիկ ու ինքնաիրացվող մարդ, ազատ ու ինքնավստահ անհատականություն, իրավագիտակից ու պատասխանատու քաղաքացի պետության ու հասարակության համար մեր կողքին:

Այս ամենի իրականացման բարդ բանաձևի հիմքում պարզ գիտակցումն է նրա, որ ապագայի կրթությունը ամենևին հեռուն չէ, որ դուք, երեխաներն ու մանկավարժական աշխատանքը առաջին հերթին ներկան է՝ ներկան կերտողը, ներկային բովանդակություն հաղորդողը, ներկայում զարգացողն ու ձևավորողը:

Ինչպես 5 տարի առաջ այս նույն օրը կայացած քարոզի իմ ելույթում, այսօր ևս համոզված եմ, որ մենք բոլորս կարող ենք աշխատել այնպես, որ մեր երեխաները սիրել սովորեն, սիրել իմանան և սիրել կարողանան:

Վերադառնանք սկիզբ. Աբովյան, Աբեղյան ու Աղայան, իսկ հաջո՞ղդը.. հաջորդը կարող եք լինել դուք:

***Միշա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ***
***մանկավարժության ամբիոնի հայցորդ***

# Մանկության ժամանակակից հիմնախնդիրները

«Մայրերի ափի մեջ պիտ փնտրել ազգերի ճակատագիրը»,-ասել է Գարեգին Նժդեհը... Եվ հենց այն ձեռքը, որն օրորում է օրորոցը, կառավարում է աշխարհը: Մայր լինել դեռ չի նշանակում ծնել երեխայի, մայր լինել նշանակում է կյանք և ոչ պարզապես գոյություն տալ երեխային:

Մայրը ընտանիքի սյունն է, ընտանիքը՝ աշխարհի սիրտը: Այս սրտում գլխավորը, կենսականը մայրն է, որի միջից արյան փոխարեն սեր է հոսում: Ավանդական հայկական ընտանիքի մոդելում երեխաների դաստիարակությամբ և խնամքով հիմնականում զբաղվել է մայրը, հորից առավել սեր, ուշադրություն և ժամանակ տրամադրել երեխային: Ավա՜ղ, ժամանակի անիվը պտտվում է և նոր աշխարհում բացվում են նոր հորիզոններ, նոր պահանջներ և նոր արժեքներ: Նյութականի կարևորությունը, նրա հանդեպ պահանջն այնքան է բարձրացել, որ երեխաների հետ անցկացվող ժամանակը կրճատվել է. ծնողները սկսել են քիչ ժամանակ տրամադրել երեխաներին: Հատկանշական է, որ ավագ դպրոցականների կեսից ավելին հանդուրժողաբար է մոտենում ծնողների անուշադրությանը, զբաղվածությանը, գիտակցում է, որ ծնողներն իրենց՝ երեխաների պահանջմունքներն ու խնդիրները լուծելու համար են այդքան աշխատում, և իրենք էլ, իրենց հերթին, նրանց հոգսը թեթևացնելու համար պատրաստ են իրենց սիրած ինչ-որ բանից հրաժարվել, միայն թե զգան ծնողների մտերմությունն ու աջակցությունը: Ծնողական ցածր մոտիվացիայի առկայությունը, երեխաների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն առաջին պլան են մղում ծնողական կրթության հիմնախնդիրը, որի իրականացումը նույնպես, այսօր, հիմնականում ընկնում է դպրոցի վրա:

Մեծերի անտարբերությունը, նրանց անվերջ զբաղված լինելը ստիպում է երեխաներին դառնալ ինքնամփոփ և լուռ, նպաստում է հաղորդակցման հմտությունների ցածր մակարդակի ձևավորմանը և, որ ամենացավալին է, երեխաներն իրենց սրտակից, իրենց լսող և իրենց հարցերին մշտապես պատասխանող «ընկերոջը» գտնում են էլեկտրոնային հարթակում, իսկ համացանցից և համակարգչից կախվածությունը հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների:

Եկեք բոլորս մտովի վերհիշենք, թե որքան հաճախ է լինում, որ աշխատանքից հետո հոգնածության պատճառով շատ ծնողներ անտեսում են երեխաներին, դեռ ավելին, մեղադրում են նրանց, որ չեն հասկանում, թե ինչքան հոգնած են և որ իրենց հետաքրքիր չէ, թե ինչ են սովորել նրանք, ինչ է կատարվել դպրոցում և այլն: Բացի այդ, մինչ երեխաներն ակնկալում են «ինչպե՞ս ես, ի՞նչ կա դպրոցում, ինչո՞ւ ես մտահոգ, հոգնա՞ծ ես» և նման այլ հարցեր, փոխարենը լսում են՝ «ի՞նչ ես ստացել, դասերդ արե՞լ ես» հարցերը, որոնց նրանք պատասխանում են ենթագիտակցորեն:

Մանկությունը դառնում է հասուն տարիքի զոհը, բայց մենք պետք է ոչ թե մեր զոհը դարձնենք, այլ մեր ողջ ներուժը օգտագործենք մանկության համար պիտանի և ներդաշնակ աշխարհ կառուցելու համար:

Երեխան բաց ծովում հայտնված նավակ է, ով չգիտի՝ որ կողմ պետք է թեքի ղեկը: Երեխային պետք է վստահել, նրան պետք է ուղղորդել, օգնել, ստեղծել այնպիսի միջավայր, որ նա վստահ լինի, որ իրեն միշտ պատրաստ են լսել ու ապրումակցել:

Սխալ է երեխային պահել ոսկե վանդակի մեջ. այդ դեպքում բոլորը տեսնում են, որ դա ոսկի է, իսկ երեխան տեսնում է, որ դա վանդակ է: Մի՛ ջանացեք ողջ ժամանակը տրամադրել ոսկե վանդակ ստեղծելուն, պարզապես թևեր տվեք երեխային, թռեք նրա հետ, սավառնեք նրա երազանքների և նպատակների մոլորակում:

Սիրե՛ք և գնահատե՛ք երեխային, լսե՛ք նրան, և նա էլ կսովորի սիրել աշխարհը:

***Արմինե ԹԱԹՈՅԱՆ***
***Օտար լեզուների ֆակուլտետ,***
***անգլերեն լեզու և***
***գրականություն բաժին,***
***մագիստրատուրա 1-ին կուրս***

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 24.06.2021 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ